ԹԵՄԱ 2 ԱՆՏԻԿ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ

§ 28. ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

1

Արևելքում իր դիրքն ամրապնդելու համար Անտոնիոսն ամուսնացավ Եգիպտոսի թագուհի Կլեոպատրայի հետ: Նա արշավանք սկսեց Պարթևստանի դեմ, սակայն պարտություն կրեց և ստիպված էր նահանջել: Իր պարտության համար Անտոնիոսը մեղադրեց Հայոց արքա Արտավազդ II-ին, որն իբր իրեն չէր օգնել: Ք.ծ.ա. 34 թ. Անտոնիոսը մեծ բանակով ներխուժեց Հայաստան, խաբեությամբ գերեց ***Արտավազդ II***-ին և նրա ընտանիքը ու տարավ Ալեքսանդրիա, իսկ Հայաստանը հայտարարեց հռոմեական պրովինցիա:

Արտավազդ II



Մարկոս Անտոնիոս

2

Սենատը նրան շնորհեց ***«Օգուստոս»*** (սրբազան) պատվանունը, որով էլ այդուհետ դիմում էին Օկտավիանոսին: Քանի որ Հուլիոս Կեսարը նրան որդեգրել էր, նա կրում էր նաև Կեսար անունը, որը ժամանակի ընթացքում վերածվեց ***«կայսր»*** տիտղոսի: Օգոստոսը հայտարարվեց ցմահ իմպերատոր, այսինքն՝ բանակի գլխավոր հրամանատար: Սենատը նրան տվել էր կոնսուլի, պրետորի, ժողովրդական տրիբունի ցմահ իշխանություն: Թեև Օգոստոսը այդ պաշտոնները չէր զբաղեցնում, նա կառավարում էր, դատում էր մարդկանց

և կարող էր արգելք դնել բոլոր պաշտոնյաների որոշումների վրա: Օգոստոսը նաև Սենատի նախագահն էր՝ պրինցեպսը: Հետագայում նա «ընտրվեց» նաև ***Մեծ Պոնտիֆիկ***՝ Հռոմի Ավագ քրմապետ:

3

Հռոմեական բանակի 25 լեգեոնները տեղաբաշխվեցին կայսրին ենթակա տարբեր պրովինցիաներում: Զինվորները կայսրից ռոճիկ էին ստանում և 20 տարի ծառայելուց հետո թոշակի անցնում՝ ստանալով հողաբաժիններ պրովինցիաներում: Օգոստոսը կազմեց ***մշտական գվարդիա 9000 զինվորներից***: Գվարդիան պետք է ապահովեր կարգուկանոնը Հռոմում և Իտալիայում, հնազանդության մեջ պահեր 100000-ավոր ստրուկներին: